

աւ նախադասութեան մէջ, կը կրկնեմ, ինչ իմաստ կայ. բնաւ Մինչ շատ իմաստ կ'ըլլայ՝ թէ որ Գոշի վերին նախադասութիւնը թարգմանեմք. «Թագաւորը ճամբորդութեան ելած ատեն՝ սուրբ խաչն իրենցմէ կ'ընդունի, և ասոնցմէ կ'ըլլան բիկնապահները, (սրահանգ = սպատխարը = սպաթարը σπαθάρου, spatharii) որ չորս հոգի կ'ըլլան — նմանապէս Մտթ. Ուռհայեցւոյն ցով (էջ 7)՝ սրահանգ ամենեկին «Հեղափոխութեան սպաներոց» չի կրնար նշանակել, այլ «արս հինգհարիւր սրահանգ» ի փայտ հանեալ սատակէր չարաչար», ըսել է, «հինգհարիւր կտրիճ մարդիկ փայտ հանելով ահաւոր կերպով սպանեց», և ոչ թէ՝ «հինգհարիւր սպաննուած մարդերու կոտոր փայտ հանելով՝ փճացուց»։ — Ըսածներէս ուրեմն յայտնի կը մնայ որ սրահանգ = սպատխար, բրդեղնիքի իբր պաշտօն առնուած՝ կը նշանակէ թիկնապահ, սպառազէն, փակ սովորական սումամը՝ ըսել է կտրիճ մարդ, զինուոր, սուսերածիգ, և ոչ բնաւ մեռելոց կոյտ։

Հ. ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳՍԵԱՆ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

ԿԱՐՄԻՐ ՀՐԱՏՈՒԽՆ

ԿԱՆԱԾ ԳԱՇՏՆ ԾԻՐԱԿԻ

ԿԱՊՈՅՏՆ ԱՐԱԳԱԾ

(Շար. տես Բազմ. 1928, էջ 108)

Ի բաց թողնով խորհրդական միտքը, Լուսաւորչի կանթեղին, և եկեղեցական պատմութեան յիշած սրբավայրերին, որոնք փրուուած են Արագածու լանջերի վրայ, յորոյ ոչ սակաւք նշանաւոր ուխտատեղիք են Հայ Ժողովուրդին՝ որոնք իբր ջանք լուսատու անշէջ վառուում են և արծարծում հաւատացեալների սրտի մէջ հաւատքը, և միայն կեդրոնացնելով մեր ուշքն բնաբնական և բնական վրայ, ասում ենք, գուցէ նոքա հրաւիրած և ձգած են դաշտի վրայ ապրող ռամկին ուշադրութիւնն վսեմական լեռան

վրայ, յորմէ ծներ է Ժողովրդական աւանդակէպն։

Աւելորդ է ասելն որ ես իսկ մերթ ընդ մերթ տանջուեմ եմ հետաքրքրութեան խթաններէն. երեւակայած եմ, ինչպէս Անգիւստինի կղզիների մանտրտիկ ծխող բոնիւրներն, նոյնպիսի ծակեր խորունկ քարայրներէ՝ միոյն կամ միւս միջէն վեր ծխող բոց առնող զագեր, չրջմոյլի հուրեր ևայլն որոնք գիշերի մթութեան մէջ թուացեր են վառուող լապտերներ։ Արդարեւ աչքի պատրանքն նպաստած է երեւակայութեան, և զրոյցներու կազմուելուն։ Այսպէս հիւսիսային կողմի երկնից սրագագաթ կատարի գոգն, դաշտէն կ'երեւի լայնատարած գուր մի, իբր հարթային բերան, ասում է ինք՝ հոն է կախուած ճրագը։ Բայց մի օր յաւոյնց ինձ գնալ մօտիկ, և ինչ. տեսի մի գեղեցիկ ձորահովիտ, կանաչ մարգ և զլլալցող ուր մուր առուակ մը ջինջ և մաքուր ջրի, որ արտորանօք վազում էր Եկեղեցի-Տէր կողմէն ձորէն դէպ ի վար, համանուն Պարսիկ գիւղին։ Այդ հովտին մէջէն էր Ջափար աղայի հովոյն (Խարն) իւր գարաման սպիտակ ուխտներու հօտերով։

Մեր նախնեաց ուշադրութենէն իսկ չէր վրիպած Արագածու խորհրդական լեռ մը լինելն իւր դժուարութեամբով, իրենձեռնով և խորհրդով, ահարկու և անմատչելի, ուր՝ բոլոր Հայաստանի մէջ Հայոց նախարարներն անքոյթ հանգստարան մը պատրաստում են իրենց թագաւորների անարգութեան մատնուած ոսկորներին։ Այսպիսի տիրապիւնութեամբ չթողին Հայաստանի բախտն օտար հողի վրայ գաղթելու։ Ո՞վ գիտէ թէ հընդակատար խառնարանին մէջ թաղուած չեն ոսկորտիքն որ դամբարան մը կազմում է, պատմականոր Քաջերու հողիներու բնակչութեան։ Եթէ պատմութեան գաղտնիքն լուծել հեշտին չէ, սակայն բնութեան գաղտնիքին խելամուտութիւնն աւելի դիւրին է և հրապուրիչ, քանզի բնութիւնն ինքնին պատ-

1. Ջո. Մուրիլի Ս. Գէորգ, Օշական, փարփի, Կոշայ Ս. Գէորգ, Թաւրի Աւետարան, Հատիկայ Ս. Ուխտն և ուրիշ փոքրեր։

մուս է իւր անցեալին, անհրաժեշտ փաստերով զորս սփռած է երկրիս երեսն և զորս ծածկած է Հողի տակ:

Տակաւին երկրաբանական մանրամասնութեանց չմտած, կը համարիմ թէ ընթերցողին հանդ պիտի լինի իմանալ թէ Բնշ կրեցինք կամ Բնշ զգացինք դեռ, դիւցըն-կէց Ուիւպուսի կատարէն աւելի վեր, աւելի բարձր քան զամպերն լուսոյ մէջ բազմած:

Պատերազմի դաշտի վրայ յաղթող զօրավարի մը զգացածն, ոչ ոք կարող է երեւակայել. նոյնպէս և մեր զգացածն ոչ ոքի հնար է ստել: Ամէն ոք գիտէ զինչ կրէ ինքն և յինքն, ուստի Հինքնն սասցին: «Մանիր զքեզ» և այսց ուրիշին համար կարող ենք մարդարէն լինել և լեզուներ խօսիլ՝ հրեշտակներու և թէ թռչուններու: Երբեք եթէ Սուլթան Մուրատի Վէլիիի գիտութիւնն (կամ խորագիտութիւնն) ունենայի հասկանալու թռչնոց լեզուն, շատ սիրով պիտի հարցանէի մեր զլին վերեւէն Հոլաթեւ նըշաւակի անցնող արծիւին, թէ Բնշ զգաց զմեզ տեսնելով հոն՝ իւր թախտին վրայ բազմած՝ մեծ սարի գագաթին իջրեւ թափառը՝ բարեմիտ գտնուած է անշուշտ հանդէպ ստորեւ գտնուողներուս. վասն զի լուծութեամբ տարածուն թեւերն թափ տալով, գնաց սաւառնակի իջաւ քարի մը գլուխը, բաւական հեռու և բաւական ցած մեզէն: Նա Արամազդի թռչունն էր, իմաստութեան նշանակ, ստոր համար բարձրահայեաց և արծուանգն նկարագրուած են իմաստուն թափառողներ, որոնք Արամազդի հետ բաժնած են երկրիս կառավարութիւնը: Այդ թագաւորներն, ըստ Նդիշէի, աթոռակից ունելով զիմաստութիւն, իրենց վիճակի մէջ վայելուչ եղած են, այսինքն ժողովուրդի երջանկութեան համար իրենց անձը զոհող:

Հայաստան պանծանօք կրնայ յիշել իւր թագաւորներին երկուքը, որք արժանի են յիշատակութեան, «նախագունիցն վեհագոյն և բարձրագունից արժանաւոր գովութեանց, և պատկանաւոր դնիլ յարձանագրութիւնս բանից» (Սոր): Արտաշէս Բ. սոմարադիր թագաւորի օրով, Հայաստանի մէջ թիզ մը գետին անմշակ մնացած չէր, որ նշան է ժո-

ղովուրդի բարօրութեան և երջանկութեան: Նա ժողովուրդի հետ ապրած է, վասն որոյ մահուան ժամանակ աւաղում է ոչ իւր թափառութիւնը, ոչ ոսկին և արծաթն, այլ խոնարհ զիւղացու շինական տան ծխանի ծուխն, և նաւասարդի առաւօտն, այսինքն մանկական օրերն, անոյշ և քաղցր օրերն, կիրքերէ և ախտերէ ազատ սրտի օրերն: Նա հայր մը եղած էր ժողովուրդին, ուստի և ժողովուրդն ալ իւր անձը զոհելովն փոխարինում է թագաւորի սիրոյն: Արտաշէսէն գուցէ աւելի համակրելի դէմք մ'է Վառձապուհ շինարար և խաղաւտ թափառորն, որ սրտի ազնուութեանը միացուցեր էր մտքի կրթութիւնն, որով նա հոգւով չափ օժանդակեց Հայու զարգացման և անգրագէտ և անիմաստ Հայաստանի՝ Սահակի և Մեսրոբի դիւթական գաւազանի տակ, զրագէտ և անյաղթ հարստսաններ տուաւ: Ոսկէզարը Վառձապուհէ, Սահակայ և Մեսրոբայ աղամանդեայ յուշարձանն է, ժամանակին անմաշկի և ժողովուրդի սրտէն անշնչելի:

Մեր համակրած արծիւ թագաւորն, յաւիտենական լեռներու սեպացած քարերու վրայ իբր արձան մ'էր կանգնած շընչաւոր և կ'իշխէր միայնութեան, թէ և անթափանցելի մնացին մեզ նրա սրտի խորհուրդներն, ինչպէս Սողոմոն իմաստունին անոր կտրած հետքն օդի միջէն: Այսուհանդերձ որ նրանից բարձր էինք և իբր յաղթական, սակայն նա ազատ էր, ինքիշխան թագաւոր ազատ երամին. իսկ մարդիկս փըշտում ենք հպատակութիւն և սուրբ ազատութիւնն վանդակում կապերով, և ըստ կամս պարտադիր օրէնքներով:

Ուր աւելի տեղին էր յիշել Սաղմոսեղոսին խօսքը «Երկինք պատմեն զփառս Աստուծոյ», քան սպիտակափառ Արագածի զլիւն վրայ: Կենդանաբար Արեւն, տիեզերքի աչքն, մեր գագաթնակէտին լուսալիր, ակնախտիղ չղոյղում էր, շերմացնում և բուժում անդրամանիչեան հառազայթներով: Այդ անսպառ Լուսոյ աղբիւրն՝ 149,500,000 տարիներ առաջ, ծնաւ իւր Արհմ խաւարին Երկիրս, երբ իբր խմորուն չըլանակ հօր

հետ թաւալում էր և կորցնում լոյս և ջերմութիւն մինչեւ ցուրտն բեկեց շրջանակն և կեդրոնաձիգ գորութեամբ կազմուեցաւ գունդ և ակօսա իւր մոլորական կեանքով ապրիլ։ Ուրանոս թեւեւ 2840:500:000 տարիներ առաջ բաժնուել է նոյն օրէնքով։ Արեւի զանգուածն մինչեւ հոն և անդր տարածուել է։ ապա ինքն իւր մէջ կծկուեց՝ հաւանօրէն մի միլիոն տարւոյ մէջ՝ մէկ քիլոմէտր եղած է։ որով կազմուել է մոլորակներու հեռաւորութիւնն կեդրոնէն և իրարու մէջ։ Այս դրութեամբ ելած են քառսի միլիէն՝ երկրէն աստղերն, որոց միլիէն փոքրագոյններէն մէկն է մեր Արեգակն։ Որպէս զի մեծ են գործք արարչական ձեռքին, որ երկիրս ի վերայ ոչնչի հաստատեց. սակայն անյեղլի օրէնք է բնութեան փոփոխութիւնն, և ասուած է երկնքի աստղերու, արեւու և լուսնի համար։ Դժբա կորնչին, բայց Աստուած ամենակալ կայ և կը մնայ։

Միլիոն տարիներ երկիրս աներեւոյթ է անպատրաստ թաւալեցաւ շոգիացած նիւթերու, գազերու մթութեան և խաւարի մէջ, մինչեւ որ պնդացաւ երկրիս կեղեւն, կազմուեցաւ ցամաքն և ջրերն հաւաքուեցան ծովերու մէջ և այն ատեն երեւցաւ լոյսն, լուսաւորն մեծ՝ յիշխանութիւն սուրենջան և լուսաւորն փոքր յիշխանութիւն գիշերի և աստղերը։ Եւ երբ օդին մէջ գումարեցան ամպեր, և երկինք ցոլեց անձրեւ օրհնութեան և երեւցաւ անեղնակն, այն ատեն նախատեղծ մարդն սկսաւ գործել գերկրի։ Եւ Աշամ, մարդն առաջին, մինչ չէր զգացած խղճի երկիւղն, արգեօք շթնդաց և դողաց սիրտն երբ Դրախտի սարերն Արարատն և Արաբաձն դղրդեցին երկիր ստորերկրեայ պայթուցիկներով և բացին հրաշունչ և հրացան բերաններն, բոց, հուր և մրրիկ ծուխ տեղալով իրենց մշակած պարտէզներու վրայ։ Իրենց տաղաւարիկի դռնէն շուարած և ապշած տեսան բարկաճայթ ոռմբեր պարսուած մինչեւ ամպեր և բոցավառ թափիլ արտեւու և այգեստաններու վրայ, հրկիզելով և լափելով բոյս և անասուն։ որպիսի սարսափ պատեց ողորմելի արարածները, երբ վիշապացած ասորաչէկ տիւր (լաւան) ասրի կո-

ղէն գալարուելով զառիթափ սողալով կուգար դէպ ի գաշտն։ Կարո՞ղ էին երեւակայել որ պիտի գար ժամանակ որ այդ հըսկաներն լռէին և դազարէին իրենց յեղափոխական մոլուցքէն և ակտիւն ընկերաշատ կեանքով ապրիլ։ Խաղաղութիւն և շինութիւն տիրէր ամայացած կողերուն, և դառնային ասպնջական հողագործին և հովիւին։

Ո՞վ երկինք որ կաս ի վերուստ և կ'իջես երկրիս, ամենայնի գրիւր չափ և սահման ծաւալեց։ Եւ ի՞նչ կարծէք հպարտ լեռներ, հինաւուրց ծերունան բազմած է ձեր գագաթին սպիտակ պատմունանով, իւր սրաթոյլ թեւերը պարզած ընդ մէջ երկնի և երկրի, դիւրատար աւազով չափում է մեծի և փոքրի, հզօրի և տկարի հասակն, և անողք մանգաղով, անդիմադրելի կարողութեամբ խոնարհեցնում է լեռների գոռոզ գագաթներն, փչում է դաժան քարեր, լեցնում է հրեղէն լեզուներ և իջնուցանում հուր և ծծումբ որ բոցախառն մրրուկելով ապականում է պարարտ և պողաբեր երկրներ։ Դամանակն թաղել է վոդկանք իւր բաժակի մէջ, խառնարանն՝ տաճեւ երաշտացած կոկորդն զովացնում է ձիւնով և ցօղով երկնից։

Դամանակի օգնութեամբ բարձրացած էինք կապոյտն Արազածու գագաթին, առկէ նիւ բացուած էր Երևակի արգաւանդաւոր կառնալ գաշտն, և Կարմիր հրաբուխի անլեզու փեռեկուած բերանն։ Մեր կանգնած տեղւոյ վրայ, հազիւ մի քայլ հեռաւորութեամբ խոր անդունդի բերանից, մեծ յուզումով կարդացինք մի տափարակ քարի վերայ քանդակուած յայտնի ալբիսիտ Պատուխովի անունն, իւր վերելքին, եթէ չեմ սխալի 1894թ։ Անփորձ եղած է Պատուխովով քայքայուող լեռան բնութեան, ապա թէ ոչ, ինչպէս խորհած է երկարատեւ պահելու իւր յիշատակն, աւելի հեռու քարի վրայ պէտք էր արձանադրել։ Ինձ թուի որ այդ քարը այժմ պէտք է խառնարանի խորը փնտռել։

Այս վերելքի ուրախութիւնն այնքան ուժգին լեցուց մեր սրտերն, որ եթէ տեսնողք լինէին ոմանք պիտի սքանչանային, իսկ այդք կատակելով պիտի ասէին որ քաղցուալիցք

են, թէ և չոր քարի գլուխ նստած էինք։ Արդ այդ տեղ յիշեցինք մեր պատանեկուս թեան օրերն, որոց համար իմաստունն աւսած է։ Ուրախ լին երիտասարդ ի մանկուս թեան քուս։ Երբ ապառ ամէն հոգսերէ և մտածութիւններէ մեր Հովոցի (Խուպիք) ձթի սարի գլխէն քարեր գլորում էինք դար ի վար և ապաշած նայում էինք թէ ինչպէս մէկ երկու տապալէ վերջ երթալով կը կըրկւ նապատէր և քառապատկեր գլորումն և հսկայից ոստումներով մինչև դաշտը կը հասնէր, և անկից անդին սրարչուս ձիու պէս ձիգ մի քանի սապարէզ վազելէն վերջ, կ'ինկնար անշուշն և անյարիր։ Այս ասաւ ցինք և եղաւ. երեքանց գրկեցինք և գլուսեցինք մի մեծ վէմ և վէի շրթունքէն թուղինք որ երթայ, և մենք բերենքսիվար ինկանք զիտելու անոր կտրած ճամբան։ Գլունաց, կողերուն զարնուելով, թափ տալով, ահաւոր ոստումներով քանդում էր կողերուց քարերու հատորներ մանր ու խոշոր, սքաւ եռանդեամբ կը հետապնէին մեր գլորաւծին, իւրաքանչիւրն քանդում պոկում էր ըստ իւր կարգին, յաւելան, բազմացան, բազմապատկուցան, եռուն շարժուն ոչ խարի հօտերու, զիւղի նախի նման, որ ամառուան շողին, սարի կողերուց բառայելով, աքսոտելով վազում են դէպ ի ջուր։

Չուարձութեան հետ օգտապարն եւս ուսնեցանք, այն է որ այդուս յայտնի եղաւ որ այն զագաթն որու վրայ թառեր էինք, ամբողջովին կազմուած է ժամանակին հրաբխի բերնէն դուրս տուած անջատ քարերով և խանձուտ աւազով։ մեր գլորած քարը տեսանք երեք չորս հարիւր մեղր բարձրուս թեւէն, գնաց խառնարանի գոգն սառած ձեան վրայ, և հոն մնաց, չվերադառնալու այլեւս իւր տեղը։

Յիտուն տարիներ յառաջ հիւսիսային երկու զագաթներն այլ երեւոյթ ունէին. մեր կեցած տեղը, գլուղէն դիտած էի, հակուած մակարդակով՝ տափարակ գաշտի երեւոյթ ունէր ըստ արտի մը երկարութեամբ, և մեր ելած օրը դիտեցի որ երեք քառորդէն աւելին պակսեր էր, ուստի օգոստոսի 28 ին (1889) քար գլորելու փորձէն վերջ, ապա

անդրադարձայ քանդուելու պատճառն, և մենք հագլու երկու երեք քայլ հեռու կանգնած էինք փոսի շրթունքէն, իսկոյն ապա դարարեցի ընկերներուս յետ քաշուելու գուցէ յանկարծ ցնցումներէն փուլ գար խախուտ զագաթն, և մենք այսօր ո՛ր պիտի լինէինք։ Նմանապէս միւս երկնիղ կատարն եւ թանառուն թուականներին դեռ վեղարածն էր. նա եւս կազմուած լինելով ժայթքած քարերէ և խանձուտ աւազէ, 1873 թ. երկրաշարժից քանդուելով՝ առեր է եղլուրաւոր ձեւէ Նիսեւս այս վերջի (1926) ժաժքի ժամանակ, ինձ դրեցին գիւղից, որ սուրուս լիկ ծայրերէն մաս մը դարձաւ քանդուել է։

Չոր զաշտարնակ մարդու ակն չի տեսնար և ոչ մտքէն կրնայ անցնիլ, մեզ համար պատրաստուած տեսարանի վայելչն՝ որ թէ և անյագելի էր, բայց ոչ գերծ վտանգէ։ Հաւնայքի հետ անմեկին է ահն և սարսափն այդ անծայր, անհատնուած ամայութեան մէջ, լի վախերով, ձորերով և ձեան ամբարներով, նենգաւոր և դաւաճան անակնկալներով. քաւնիք խել են, թաղուել են և անհետացել սառնարանների մէջ. երեսը ծածկուած ձիւնով, տակն բացուած է սառոյցներու ճեղքուածքներ, մէջն ինկնող յաւիտենական գերեզմանը պատրաստ կը գտնէ։ Կարող են այն տեղ եղիպտական մուսիայէն աւելի աւնապական մնալ, թէք մեր մոլորակն սառոյցային շրջանին հակառակ՝ ջերմ շրջան մ'եւս չանցնէ, «յորում երկինք տազնապաւ անցցեն, և բնութիւնք հրով կիզեալ լուծցին» (Պետ. Բ. գ. 10, 12)։ Թէպէտ հաւաւտում ենք որ այդ օրը շատ ու շատ հեռու է, բայց մօտակայ և վերահաս վտանգն ըստիպեց ահիւ և դողութեամբ մեր անձի փըրկութիւնը մտածել։ Կատակ չէ 4500 ամգր բարձրութեան վրայ, թէկուզ ամառ լինի, անձրեւի բռնուիլ, անձրեւ որ կրնայ փոխուիլ կարկտի և ձեան. եթէ մէկն թաղուի ձեան տակ, ոչ խնդրակը կու դան ետեւէն և ոչ որսի շներ ունէինք որ առաջնորդ լինէր խնդրակներին։ Բարձրագէ գմուտ սև ամպեր երեւցան արեւմտեան հորիզոնի վըրայ։ Շիրակայ գաշտի ամպտունը լիքն էր։ Ալաւայ և Եւահի լեռներու ետեւէն,

Բասենու սարերու հովերէն մղուած ամպերն
բանակ կազմած յառաջ կու գան: Ձլորըու
լեռներէն և Փեմպակի ձորերէն ելած ուրիշ
գունդեր կը փութան մարտի ասպարէզն. ու
րոտընդոտ կայծակներով կուռի խառնու-
ղըն հանդիպում է Շիրակի դաշտի վրայ:
Երբ փախքովանէն և ինճէ Տէրէէն սկսած
ճակատն սեւ թօ՜ կապէ և սկսի պարուը-
ուիլ, յառաջընթաց գորշագոյն ամպեր ծուէն
ծուէն խաղան փոթորկելով, դա կարկուտի
նշան է, և անպատճառ զայիս է կարկուտն
մրրկիով հանդերձ, երբ Արագածու երկու
կատարներն բաց են՝ արեւն ի ճակատին:
Կարկուտն տեւում է այնքան ժամանակ մին-
չեւ որ ամպերն զնան բախին հսկայի կուրծ-
քին, իսկոյն կարկուտն անձերէի կը փոխ-
ուի, շատ անգամ յետադարձ տեղատարափ
մը՝ հեղեղներ կը լանէ: Մինչդեռ բովան-
դակ Շիրակի դաշտն թանձր ամպերով ծած-
կուեցաւ մեր աչքերէն, մենք արեւի հեշտ
ճառագայթներու մէջ թաթաւուչ, դիտում
էինք այս նորանշան և հիասքանչ տեսա-
րանը: Գոռգոռոցների և որսողմների ան-
ընդհատ ճարճատուներն և բոմբւններն,
մարտագոռ հրանօթների խուճ ձայնի նման
հասնում էին մեր լսողութեան: Ահեղ էր
տեսիլը իբրև ծովու խռովութեան, երբ դառ-
նաշունչ հովերն փչէն հեւքսէն, «և բար-
կացեալ ալիքն լեռնաձեւ կուտակին, մէտ
ի մէտ խոնարհին» այնպէս օդի մէջ առկախ
զալարէին և լեռնաձեւ կուտակէին ամպերն
վողերով՝ ինչպէս երկաթուղւոյ մեքենա-
յին կուրծքէն և պնշներէն փոշւած քուլայ
քուլայ շողին և ծուխն, որք օձապարոյր
բարձրանան օդի մէջ, և հովն քշէ խառնէ
իրար: Երկու ժամի չափ հանդիսատեսն եւ
զանք, մէկ անգամ կենանքիս մէջ պատահած
տեսարանին, երկնային անդորրութեան մէջ,
անամպ չափեղայ երկնակամարին տակ, տի-
րական հովերով սալաթոռի վրայ բազմած.
«Փառք ի բարձունս Աստուծոյ» երգեցինք:

Իսկ յերկիր . . . խոռվայոյզ ամպերն թօ-
թափելով բարկութիւն, բիծ, շարութիւն և
առատ ջուր, սկսան բարձրանալ, փեռելիլ,
ցիր և ցան լինել, անօսրանալ և անգայտա-
նալ հորիզոնի վրայէն, բացուեցաւ լեռնե-
րու մանեակն թարմացած, երեւցան կանա-
չաւուն լուսափայլ ջոզով շողողուն արտերն
և մարգագետիններն. երկրիս վրայ Շի-
րակի դաշտն ևս գտած էր խաղաղութիւնն:

Հիւրընկալ գագաթէն՝ դիպանաւոր է ազ-
գագրական մի հարեանցի ակնարկ տալ և առ-
գաստոր և քարերար լեռանս ողորմութեամբ
ապրող ցեղերուն: Այս ածականներուն ար-
ժանի է Արագածն: Նա մի լեռ է, (բացի
հինգ հարիւր (?) մեղր բարձրութեամբ կազ-
մող խառնարանի գագաթներն աւազուտ) որի
բովանդակ իրանը պիտանի և օգտակար է
մարդկային տնտեսութեան: Գարունէ մին-
չեւ աշուն, գագաթներու մօտիկ սառուցա-
րանների, անձրևների և հազարաւոր աղբիւր-
ներու ջրերուց, ոչ մի կաթիլ անօգուտ տեղ
չի վազեր: Համոզուելու համար, բաւական
է որ մէկն Արագածի տեղագրական քար-
տին աչք մի տայ, և պիտի տեսնէ հարիւ-
րաւոր գիւղեր՝ դաշտաբերանից սկսած մին-
չեւ երեք հազար մեղր բարձրութեան վը-
րայ, կառչած փակուած են հսկայի ստինք-
ներին. ծծում են, խմում են, առողում են
արտեր այգիներ և դռեր: Իսկ մինչեւ չորս
հազարի բարձրութեան վրայ գտնուում են
ամառնային արօտատեղիներն, այլազգի ցե-
ղերուն, այսպէս բաժանուած: Թուրքեր հիւ-
սիսի երկնից գագաթի լանջերը սեփակա-
ներ էին, բռնած Մանթաշի ձորի վերի բերա-
նից ոլորելով Ապարաններն, կը գնային մին-
չեւ Անբերդի ձորն: Սոքա զայլոյ էին Երե-
ւանու զաշտէն Եւհիլարի և Սև ջրի մօտերէն:
Շիրակայ դաշտի զեղացիքն, հողի պակասու-
թեան պատճառաւ, կորաքամակ՝ վիզերնին
տանձի պոչի պէս բարակցած էին, իսկ թուրք
աղաներ, ցարիզմի ժամանակ՝ Փանխանե-

1. Երբ անհզով բուրգը լաւ զգնէն յետոյ լզուան
կը տարածէ բուրգը բաւական թանձրութեամբ պատառի
մը վրան, և պլլելով մի կէտ փաթթոց կը ձեւացնէ,
սնոր Բօտ կ'անեն, յետոյ երկուստարներ կը սկսին

ուռի հարուածներով տանիլ և բերել, երբեմն եփ ջուր
վրան լեցնելով, մինչև որ թաղիք ձևանայ, զոր յետոյ
իբրև զօրք աներու մէջ կը զբօսածնէ:

բու պաշտպանութեամբ մարմնու յագեցած՝ ցուլերու պէս մէջքերին հաստացուցած գոռային և եղիւրով հող փրտկէին, վասն զի բռնած էին Արաքածու բոլոր արօտաւ տողիներն, ուր անցնում էին ամառն՝ իսկ ձմեռն լըրեւանի կողմն արան լինելով (լըրմ) և երեք ամսուան խնայած դաշտի խոտով, բացօթեայ կերակրուէին անոնց տաւարն ու ոչխարներու հօտերն՝ Եւ դռքս են գիւղացու հարստութեան աղբիւրն, հող, ջուր և խոտ։ Ե՛րբ պիտի տայ Աստուած Հայ գիւղացուն կուշտ փորով հաց ուտել, և ապահով նստիլ իւր որթին և թզնիին տակ կամ թէ իւր զիգի և ամրոցի՝ հովն իսկ Քուրդերն աւրեմտեան տափարակ զագաթի լանջերն բռնած էին, Մանթաշու ձորից մինչեւ Բիւրականի բարձունքներն, գրեթէ մինչեւ նոյն Անդերդի ձորն։ Ինձ յայտնի է, Քուրդերն (մաշմետական) զանազան սոճմբու բաժնուած են, Հին նախարարական տներու ձեւով մեծ պատերազմից յառաջ իւրաքանչիւր ցեղ իւր սեփական գետինն ունէր ուր հու վոց կ'ելլէին։ Որինակի համար Մանթաշի ձորի մէջ Բէզլքցիք էին, ձորի էն վերի կողմն Աթաշի խորան էր, նրա մօտիկ քաւաժայտից չրաղացի քարի մը ջուր յորդաբուխ ժայթքելով բխում է։ Հատիճու վերի բարձունքներն բռնած էին Ճամալիցիք, ուրոք ասացին թէ իրենց սաճմանի մէջ կան խաչքարեր։ Դա ինձ յիշեցուց Մեծն Ջաքաւրիայ Սպասաւարի մի արձանագրութեան բովանդակութիւնն, յորում գետիններու նըւէրներ անում է Հառիճու Ուխտին. «Եւ զառային սաճմանքն որ բուն լիւլ էր հասաւ տատեցի ի ՍԱՀՄԱՆԱԽԱՅԷ Ի Հառիճա գետն կոռ մարգով, գրեթով ևայլն»։ Ատիեմանու վերև՝ Զլքանի աղբիւրներից կազմուած գետակի լայ կային Գլխերանցիք։ Ենչև Հառիճից անդին՝ անոնց վերևի թափերն բռնած

էին Հայաէրանցիք. իսկ Բիւրականի կողմի վերեւի բարձունքներն մինչեւ Հաշի տակ՝ գրաւած էին Միլիանցիք, կարծեօք ամէնից բազմամարդն էր այս տոճմը։ Ասոնց սահմանի մէջն է այն փոքրիկ լիճը, անյատակ կարծուած, որի մասին կը զրուցեն թէ հաւորդակցութեան հետ է Երեւանու Սեւ ջրի հետ, և իբր թէ փորձով իմացած են, յարդ լիցնելով լճին մէջ և դիտած են որ Սեւ ջրի ակէն դուրս տուեր է։ Յարդն ջրի տակ երթալու համար ենթադրելու է որ մէջն յորս ձանք կայ, թերեւս աւելի շուտ ասեիլ է կողմնակի խառնարան մ'եղած է և այժմ դարձած ջրի շտեմարան պահելով հաւասարակշիռ մակերեւոյթ երկու իրար հաղորդուող ամաններու պէս, ըստ քնարանական կառնոյն և թերեւս մատակարարող Զլքանի աղբիւրներուն։

Թէ թուրքերն և թէ Քուրդերն վայելում էին բոլոր ամառն Արաքածու հնչտաշունչ և անապական օդն, և ըմպում քաղցրահամ և առողջարար ջուրը, ականակիտ իրեւ կոնկու աչքէ Ո՛ր թէ որչափ բարեհամ է Արաքածու ջուրը, թող ասեն նրա արժէքն գնահատող կիւրմիցիք, որ իրենց աղահամ կամ աւելի անցի աղբիւրներու ջրերու երեւսեն իրենց երեսներու գոյնն փախեր է։ Մեր աղբիւրներու ջրերն իրենց համն և մաքրուած թիւնն պարտին հարթալային ժայռերու, փուտ քարին (pierre ponce) խանձուտ աւազին, որոց միջէն մզուելով, թորուածի պէս, ոչ մի օտար տարր չեն պարունակեր։

Շիրակի ժողովուրդն լաւ գիտէ իւր ջրի բուժիչ յատկութիւնն և պատուականուած թիւնն։ Արաքածին երկրպագու գեղովկ բընակներն, իրենց սիրած կուլքերուն ի պատիւ ուրախութեան ժամերուն՝ թաղալու (պարբեր) սուելով պարում և երգում են.

Ալակեազ՝ բարձր տար է
Ջուրը-հիւանդին դեղ է.
Սիրող սիրողի չեն տար,
Էս Բ՛նչ անօրէն գեղ է։

Հ. Գ. ՆԱԼԳԵՏԵՆՍ

1. Քառակուսի ձևով կարած Քթթի աղիւսներով շէնուած և ճեփուած բուրգեր։

2. Կապույտակն։